




«ԹՈՂ ՏՈՒՆԷ ՄԱՆԷ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՆՈՒ ԳՍՆ» : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . ԾԳՈՍՈՍ 1 . 1875 .

ԹԻՒ 8



**ԳՐԻԳՈՐԻ ԱՌԱՋԻՆ
ՃԱՄԱՐՈՐԳՈՒԹԻՒՆԸ**

Հաս պատկեր մը կայ ուր ցուցուած է թէ Գրիգոր ինչ կերպարանք ունէր, երբ անիկա իր առաջին ճամբորդութիւնն ընելու համար հօրը տունէն մեկնեցու։ Այսպիսի տղայ մը ցուցնելու համար այս պատկերը շատ

մեծ է, բայց հարկ էր պատկերն աւելի մեծ նկարել՝ ցուցնելու համար բոլոր այն զարմանալի բաները զոր Գրիգոր տեսաւ, երբ իր մօրը հետ այդին գնաց։ Գրիգոր տեսաւ ոչ խարներ և այծեր և հովաին մեծ շունը, տեսաւ նաև կովեր և գոմէշներ, թռչուններ և թիթեռներ, այնպէս որ զրեթէ ամէն վայրկեան կը

գոչէր, «Ո՛հ, տեսէք, տեսէք.» մանաւանդ երբ այդին եկան, և կը տեսնէր խաղողի մեծ մեծ ողկոյզները, և, ըստ իր կարծեաց, գրեթէ ձիու կէս բեռ ըլլալու չափ խոշոր մեղրապտուկներ (բարբուշ)։ Երջանիկ շատ երջանիկ օր էր այս փոքրիկ տղուն համար այն օրը. ուստի և, ինչպէս կը տեսնէք, գայտոյններն արեւը մանկու առեր տուն կը գառնան խաղողով, մեղրապտուկներով, մեղրով և թղով լեցուն կողովներով։ Նախ կու գայ Սուրբիկ, Գրիգորի մօրաբոյրը, յետոյ միւս մօրաբոյրը Մարիամ որ Գրիգորի ձեռքէն բռնած է, և ապա անոր ետեւէն Գրիգորի մայրն, Արուսեակ աիկին, և ուրիշ գրայեր։

Նայեցէք Գրիգորի երեսը, և տեսէք թէ անիկա իր այս առաջին ճամբորդութեանն ակտիւնը։

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԻՔ

Վաճառականք հաշուետամար ունին որուն մէկ երեսը կը գրեն ինչ որ կ'առնեն, միւս երեսն ալ կը գրեն ինչ որ կու տան, և ապա տարւոյն վերջը հոն նայելով կը գտնեն իրենց հաշիւն իւրաքանչիւր անձի հետ, այսինքն թէ ինչ տուած են անոր կամ ինչ տուած են անիկէ։

Իմ բարեկամս Սարգիս ալ հաշուետամար մը կը բռնէ, բայց այս հաշուետամարը շատ զարմանալի է։ Օր մը Յովակիմ երբ գնդակ կը խաղար, Սարգիսն զարկաւ, և մինչ Սարգիս անոր ետեւէն կը վազէր, Յովակիմ կերպով մը անոր կարմիր գդակը (Ֆէսք) յափշտակելով անոր գլխէն փախաւ, և ապտօտ ճամբուն վրայ նետեց գդակը։ Սարգիս շատ բարեկամացաւ, և բարկութեան պատճառն աս

չէր որ Յովակիմ զարկաւ անոր, այլ վասն զի նախատինք կը համարէր իրեն որ Յովակիմ յափշտակելով կարմիր գգակն անոր գլխէն արագ փախած էր անոր ձեռքէն : Ուստի երբ տուն եկաւ, տակաւին կը խորհէր թէ ինչ ընէր Յովակիմին, եթէ զանի բընէր : Սակայն մայրը տեսնելով անոր բարկութիւնն բաւ, անոր, «Սարգիս, կարծեմ ազէկ կ'ընես, եթէ հաշուե-տումարդ նայիս :» Սարգիս մօրմէն այս խօսքը լսելով կանկ առաւ, որպէս թէ միտքը նոր բան մը եկաւ. դէմքն ալ զուարթացաւ, և իսկոյն գրասեղանին քով երթալով տետրակ մը բացաւ, և սկսաւ թերթերն արագ արագ դարձընել, մինչև որ էջ մը հասաւ որուն գլուխը գրուած էր, «Յովակիմ» : Էջին վրայ ալ սա խօսքերը կային.

«Մայիս 1. Յովակիմ ինծի երկու հաս կերաս տուաւ :»

«Յունիս 8. Յովակիմ ինծի օգնեց աղբիւրէն ջուր բերելու :»

«Օգոստ. 20. Յովակիմ ինծի իր տանձէն կտոր մը տուաւ :»

Սարգիս այն տետրակին մէջ կը գրէր ինչ բարիք որ փոքրիկ բարեկամները կ'ընէին անոր, և երբ Սարգիս անոնց մէկուն դէմ բարկանալու պատճառ մը կ'ունենար, հայրը սովոր էր անոր կարգացնել այն բարեկամին ներելու պատճառները որ տետրակին մէջ նշանակուած էին, որպէս զի Սարգիս զանոնք յիշելով մտնար իր բարկութիւնը :

Ինչ կը կարծէք, Սարգիս Յովակիմէն ընդունած ծառայութիւնները կարգալէն ետքը շարունակեց անոր դէմ ո՞ր պահել : Ոչ, Եւ այն հաշուե-տումարը բռնելուն օգուտն այս էր, և այս պատճառաւ այն գիրքը «Շնորհակալութեան գիրք» կ'անուանուէր :

ՃԱՌՈՆ ՆԿԱՐՈՎ


Ձեր մէջէն ո՞վ գիտէ թէ ճարտի երկիրն ուր է : Նայեցէք ձեր աշխարհացուցին վրայ, և պիտի գտնեք զայն Ասիոյ արևելեան ծայրը : Ճարտնիք իրենց թագաւորը «Միգատոյ» կ'անուանեն, և Միգատոյ իր 35,000,000 հպատակ ունի : Ասկէ մինչև 15 տարի առաջ օտարականաց արգելեալ էր ճարտն մտնել, բայց այս վերջին տարիներուն մէջ, ինչպէս որ շարժական Աւետարները կարգացողք գի-

տան, ճարտնիք սիրով կ'ընդունին Եւրոպայի և Ամերիկայի լուսաւորեալ ազգաց քաղաքակրթութիւնն ու դաստիարակութիւնը : Մեր այս պատկերը ճարտնացուց կենաց քանի մը նշանաւոր բաները կը ցուցնէ :

Ճարտնիք մէկ կողմանէ շատ կրօնասէր են, քանզի այն երկրին մէջ երեսուն և հինգ տեսակ կրօնք կայ, և երեսուն և հինկին տմէն մէկը մէյմէկ տեսակ կուպաշտութիւն է : Բայց որիչ կողմանէ, այսինքն անոնց գործին նայելով, ամենին կրօնասէր չեն, քանզի իրենց ազօթքներն իրենք չեն ընէր, այլ մեքենաներու ընել կու տան : Մեքենան ազօթքներով ծածկուած փայտէ սիւն է, Սեան մէջտեղ անիւ մը կայ որ մեր պատկերին մէջ կը տեսնուի, և ով որ քանի մը անգամ անիւը կը դարձնէ, այնչափ ազօթք բրած կը համարուի, որչափ ազօթք որ անիւը դարձուց :



ԱՂՕՔԲԻ ՄԵՔԵՆԱՅ



ՊԱՅՏ ՄԸ

Այն երկրին մէջ ձիերը յարգէ շինուած տեսակ մը պայտ ունին, բայց ասիկա այնպէս թոյլ կը կապուի անոնց ոտուրներուն, որ քայլելու տան կրնան հանել զոյն :



Մարդիկ ալ հոն կը ճամբորդեն տեսակ մը գահաւորակի մէջ որ «գանկայ» կը կոչուի, և երկու մարդ զոյն

ձողի մը անցնելով կը տանին : Գանկոն իր վրայ ձեղուն մը ունի մէջը նստողն արևէն պահելու համար : Եթէ մեր պատկերին մէջ նկարուած գահաւորակին նայեք, պիտի տեսնէք մեծ ափսէի նման բոլորակ բան մը որ ձեղունին վրայ է : Այս բոլորակ բանը գահաւորակին մէջ նստողին գլխարկն է : Արևէն պահելու համար մարդիկ հոն իրենց գլխարկը հովանոցի ձև կը շինեն :

Անձրեւի ժամանակ մարդիկ յարգէ, կամ ձիթով օծուած թուղթէ, տեսակ մը վերարկու կը հագնին :

Հոն կանայք, երբ կ'ամուսնանան, իրենց ակումները սև կը ներկեն, ընդունին ալ կ'ածիլեն :

Փոքր աղջկունք հոն իրենց փոքրիկ եղբայրներն ու քոյրերը կը տանին, բայց դեռէք ինչպէս : Աղջկան պարեգօար (Բնթալ) բանալով և տղան մէջը դնելով պնդով կը կապեն աղջկան վրին, այնպէս որ պարեգօար պարկի պէս կ'ըլլայ և տղան մէջէն չի նար :

Միգատոն անցեալ տարի հրաման բրաւ որ բոլոր ժողովուրդը Եւրոպական ձեւ հանդերձ հաղնի. այսպէս անոնք, քան առաջ, հիմա աւելի նորանշան կ'երեւին, մեծ և փոքր, ծեր և մանուկ, ամէնքը ճիշդ միօրինակ երկայն սև գլխարկօք և սև հանդերձներով :

ՊԱՏՈՒՀԱՆԸ ԲԱՅ ԹՈՂԵՒՈՒՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Ստեփան գիշեր մը տանը վերնախորկը կ'երթար քնանալու, և մայրն անոր անկողինը պատարաստելէն ետքը բաւաւ. «Գիշեր բարի, վաղիւ առաւօտուն կանուխ ել» Ստեփան պատասխանեց, «Կ'երթեմ, միայն դուռը բաց թող որ հոս շատ տաք չըլլայ. բայց ոչ պատուհանը բաց թող. եթէ դուռը բաց թողուս, կանթեղին լոյսն աչքիս մէջ ծագելով պիտի չթողու որ քնանամ :» Այսպէս անոր մայրը պատուհանը բացաւ, և դուռը դոցնելով գնաց, Ստեփան ալ քնացաւ, բայց քիչ մը ետք սենեկին մէջ ֆըր-բ-բ-բ ձայն մը լսելով արթնացաւ : Բան մը չէր տեսնուէր, բայց այն ձայնը կար սենեկին մէջ, որպէս թէ մեծ թըռչուն մը մտած էր հոն : Ստեփան երկայն ատեն չկեցաւ խորհելու թէ ինչ էր այն ձայն, շուտով ճրագ վա-

ուեց և չղջիկ մը տեսաւ: Իսկոյն պատահանք գոցեց որ չղջիկը չի փակէր, և որք սկսաւ: Չղջիկը կը թռչէր արագ, և Ստեփան կը ցատկէր սնոր ետէն, և ձեռքի վարչամակը շարժելով աջ ձախ, կը զարնէր ամուռներուն, ջուրի ամաններուն, և այնպիսի աղմուկ մը կը ընէր որ հայրն ու մայրը սանդուղներէն վեր վազելով սենեակը մտան տեսնելու թէ արդեօք փռնկեցա՞ւ սենեակը: Ընդ այն միջոցին Ստեփան վարչամակով յաջող հարուած մը տալով դետինը նետեց չղջիկը, և իսկոյն վրան դաւաթ մը ծածկեց աղէկ մը գիտելու համար կենդանին: «Ընդ միան կը նըմանի», ըսաւ, «միայն ոտը չունի»:

«Այո, ունի», ըսաւ հայրը, «երկու ոտը, և երկու երկայն ձեռուրներ ունի: Աստիք ալ մաշկով մը միացած են, և չղջիկը զանոնք իբրև թի կը գործածէ, բայց անոր ոտկները շատ կը նմանին քու ձեռքիդ ոտկներուն: Չղջիկը զանոնք կրնայ ամբիտիւ և ձգել այնպէս դիւրաւ, ինչպէս դուն կ'ամբիտիս և կը ձգես քու ձեռուրներդ»: «Չղջիկը լուսոյ մէջ կրնայ տեսնել», հարցուց Ստեփան: «Այո» պատասխանեց հայրը, «բայց անդամ մը մարդ մը քանի մը չղջիկ բռնելով անոնց աչքերը հանեց և այնպէս թողուց թռչիլ սենեկի մը մէջ ուր շատ չուաններ կ'ապուած էին: Բայց չղջիկները, թէպէտ չէին տեսներ, այնպիսի զգուշութեամբ կը թռչէին որ չուաններուն չէին զարնուեր»:

«Թեւեբուն ծայրի կարթերը տես, հայր», ըսաւ Ստեփան:

«Այո», ըսաւ հայրը, «անոնք չղջիկան բայթ մատուրներն են, և այն կարթածն մատուրներէն կախուելով կը քնանայ»:

«Ինչ զարմանալի քնանալ», ըսաւ Ստեփան:

«Արդարեւ որ կերպ մը քնանալ է, բայց այս կենդանիները ձմեռն ի բուն այսպէս կը քնանան, և մինչև գարուն չեն արթննար», ըսաւ հայրը: «Այն երկիրներուն մէջ միայն որ միշտ տաք է չղջիկներն այս երկայն քունը չունին: Աւելի բան հարկեր տեսակ չղջիկ կայ արևաբնի վրայ, և ոմանք կատուի չափ մեծ են: Եթէ այսպիսի մեծ չղջիկ մը սենեակս գար քունիս մէջ, հաճելի բան մը պիտի չըլլար», ըսաւ Ստեփան:

«Անտարակոյտ, հաճելի չէր ըլլար», պատասխանեց հայրը, «բայց հիմա

քեզի համար պառկելու ժամանակ է, գիշեր բարի: Կը յուսամ թէ ալ ուրիշ չղջիկ չի գար քեզ արթնցընելու»:

«Կը փափաքէի որ ամէն գիշեր պատահանէս ներս անասուն մը դար», ըսաւ Ստեփան պառկելով, «գուր ալ սենեակս գարով անոր վրայով խօսէիք ինձի»:

ՔԱՆԻ ՄԸ ԱՌԱՎԱՅԻՈՐ ԽՕՄԲ

Ամէն բարեաց սիրտն Աստուծոյ երկիւզն է:

Ինչ որ քու անձիդ համար գէշ կը համարին՝ ուրիշն մի ընէր:


Աշխարհիս վրայ ամենէն աւելի ցաւակցութեան արժանի մարդը ազէտ մարդն է, քանզի ամենէն մեծ աղքատութիւնը ազիտութիւնն է:

Անիրաւութիւն ընելէ զգուշացիր, քանզի անիրաւութիւնն օձ է, որ մը քեզ ալ կը խայթէ:

Մարդ երբ առաւօտուն քունէն կ'արթննայ, ողջ ելլելուն համար Աստուծոյ շնորհակալ ըլլալու է:

Ինք իրեն օգնող (այսինքն աշխատող) մարդուն Աստուծոյ ալ կ'օգնէ:

(ԷՔՖ-Լ)



ՄԵՃ ՄՈՒԿ ՄԸ

Այս կենդանին, ինչպէս կը տեսնուի, իր ախտանքը կը ցուցնէ, որպէս թէ քեզ պիտի խածնէ, և արդարեւ կը խածնէր քեզ, եթէ ջուրէն այնչափ հեռու չըլլար, որ անոր մէջ ցատկելով կարող ըլլար փախիլ: Այս կենդանին Բալանոս կը կոչուի, և Ամերիկայի քանի մը կողմերը գետերու մէջ կ'ապրի, և գետի մը մէջ երկիրը փորելով իրեն որջ կը պատրաստէ: Այս կենդանին ալ համայն է այն մեծ մակերուն որ մեր տուններուն մէջ մեզի այնչափ նեղութիւն կու տան,

բայց այնչափ մեծ է որ շան մը հետ կրնայ կռուիլ և անոր յաղթել: Մորթը կարմրի կը դարնէ աղուիսու մարթին պէս, և այս մորթին համար կ'որսացուի յօգուտ մուշտակագործաց:

ԻՐ ՀՕՐԸ ՏԱՆ ՄԷՋ

Երբ տղայ էի և գեռ գպրոց կ'երթայի, ամառուան պարապոյ (Չգոնց) մը ժամանակ ընկերներէս մին, Սենեքերիմ անուն, ուղեց զիս իր տունը տանել: Ես կը վարանէի անոր հրաւերն ընդունել, քանզի անոր ընտանիքը չէի ճանչար, և չէի գիտեր թէ անոնք կ'ուզէին որ օտար մը իրենց տունը երթար: Բայց երբ ընկերս շատ թախանձեց զիս, որոշեցի երթալ անոր հետ. ուստի հետեւեալ իրիկունը մէկտեղ հասանք տան մը գրան առջև որ ինձի թագաւորական պալատի մը պէս երեցաւ: Գիտէի որ Սենեքերիմի հայրն հարուստ էր, բայց չկարծեցի թէ այն պալատի նման տունը Սենեքերիմի հօրն էր, և գրեթէ վախ մը եկաւ ինձի, երբ Սենեքերիմ տանը գուրը մարմարինէ աստիճաններէն վեր վազելով համարձակու թե ա մը զանգակը քաշեց: Գուրը բացուեցաւ, և Սենեքերիմ բակը մտնելով որ նայնպէս սպիտակ մարմարինէ էր զիս ալ իր ետեւէն կանչեց, և բակէն անցնելով մտանք այդօրեւու սենեակը (եւտիւթ) որ թաւ և կակուղ մեծագին գորգով մը ծածկուած էր: Կեանքիս մէջ

այնպիսի ազնիւ գորդ տեսած չէի, և կը վախնայի վրան կոխել որ չաղտուեմ: Բայց Սենեքերիմ հոգ չէր ընէր, և սկսաւ պատիւ բարձրաձայն խօսելով, մինչ ես հազու կը համարձակէի ձայն հանել վախէս: Քիչ մը ետքը Սենեքերիմ, «Կեցիր հոս», ըսաւ ինձի, և սկսաւ նայն համարձակութեամբ վազելով ելլել լոյն ամողղէն վեր որ կարմիր գորգով ծածկուած էր, և որուն վանդակներն ոտկեզօծ էին, պատահաններուն ապակիներն ալ գունաւոր: Սենեքերիմ վեր ելած տները պողպատով կ'ըսէր, «Եկայ, եկայ»:

խակ ես վարը գրեթէ կը գողայի խորհրդով թէ մէկը գիմացը պիտի ելլէր և յանդիմանէր զայնի այսպիսի շքեղ պաշտախի մը մէջ այնպէս յանդգնաբար պոռալուն համար . բայց, ընդհակառակն սոքի ձայն առի, և քիչ մը ետքը կնոջ մը ձայնը որ կ'ըսէր, «Միրելի տղաս» յետոյ ուրիշ ձայներ որ Սենեքերիմի հետ կը խօսէին, ան ալ զուարթ և համարձակ եղանակաւ կը պատասխանէր անոնց : Ետ շանցաւ, Սենեքերիմ նոյն սանդղէն վար վազելով նորէն քովս եկաւ, մայրն ալ անոր ետեւէն ներս մտնելով, զիս ողջունեց : «Ուրախ եմ որ եկար» ըսաւ . յետոյ անունս հարցոյց, վերջապէս ըսաւ . նաև ինձի որ համարձակ ըլլամ, որպէս թէ իմ ամուսնի մէջ եմ : Անտան հասկցայ թէ ինչու համար զՍենեքերիմ արգելող մը չեղաւ երբ սանդղէն վեր կը վաղէր, թէ ինչու համար ան ալ ամենեւին չէր ակնածեր բարձրաձայն խօսիլ, մինչ ևս ձայն հանելու կը վախնայի, և թէ ինչու համար դուք ըսացուրուն պէս, առանց հրամանի համարձակ ներս մտաւ : Վասն զի այն տունը Սենեքերիմայ հօրը տունն էր :

Այն օրէն ետքը ես շատ անգամ այն տունը կ'երթայի, ուստի և կամայ կամայ այն տեղին գեղեցիկ բաներուն սովորեցայ, և վերջապէս բոլոր ընտանիքին այնպէս սիրելի եղայ, որ ամեն մէկ տղուն պէս կը մտնէի կեւրէի, և առանց ակնածելու կ'անցնէի բակէն, կը մտնէի սենեակները և գորգերուն վրայ կը կոխէի, որպէս թէ բուն իմ հօրս տունն էր :

Մեր երկնաւոր Հայրն ալ իր գաւկըններուն համար պատրաստած է մեծամեծ հարստութիւններ, մեծամեծ շնորհքներ : Ինչպէս որ ես Սենեքերիմայ հօրը գրանն առջև կրկին նայի առաջին անգամ, ամէն օտարական ճիշդ այնպէս պիտի կենայ երկնաւոր Հօրմէն պատրաստուած այն փառաւոր դանձաւան առջև : Բայց ամենը սրբին անոր մէջ գանրուած բոլոր հարստութեան վրայ իբրաւունք ունի, զանոնք իր իր ստացուածը կը գործածէ, և կրնայ երթալ և գալ ըստ հաճոյս : Ամենեւին բան մը չի կրնար վախ ստալ անոր որ Աստուծոյ մօտ կը բնակի, քանզի գիտէ թէ իր Հօրը ամենը մէջ է :

Տղայք երբ փոքր են՝ շատ կու լան, թէպէտ իրենց բոլորակը եղողները կը խնդան և զանոնք գոհ ընելու կը ջանան : Սակայն երբ տղայք կը մեծնան, այնպէս ապրելու են որ, երբ Աստուծոյ կը կանչուին, իրենք ուրախանան, մինչ անոնց բոլորակը եղողները կու լան :



ՊԱՏԿԵՐՆԵՐ ԶՆՆԵԼ

Կուղեմ որ տղայք, փոքր տղայք, պատկերները զննել սորվին . այսինքն զանոնք խնամով դիտելով անոնց մէջ եղած ամէն բան տեսնեն :

Այս բանը շատ անգամ կ'ընեն իմ պզտիկ աղջիկներս, քանզի երկու աղջիկ ունիմ, մին «Պէյ» անուն չորս, միւսը «Մէյ» վեց տարեկան : Տես ինչ կերպով կը զննեն պատկեր մը : Պատկեր մը կ'առնեմ, զոր օրինակ այս պատկերը, և կը հարցնեմ երէց աղջկանս, «Մէյ, այս պատկերին մէջ ինչ բան կայ» : «Պզտիկ աղջիկ մը» կը պատասխանէ Մէյ : Յետոյ կը հարցնեմ միւս աղջկանս, «Պէյ, այս պատկերին մէջ ուրիշ ինչ կայ» : «Պզտիկ աղջկան երկու ձեռքերը» կ'ըսէ Պէյ : Ետքը կարգաւ կ'ըսեն ինչ որ կը գիտեն պատկերին մէջ . «Թուփեր կան» : «Ծառեր ալ կան» : «Խոտ ալ կը տեսնենք» : «Քարեր ալ կան» : «Ահա, ջուր ալ կայ» : Յետոյ կը հարցնեմ անոնց . «Պզտիկ աղջիկը քանի տարեկան կայ» : Մէյ որ վեց տարեկան է կ'ըսէ, «Իմ տարեքս կայ» : Նորէն կը հարցնեմ, «Ինչպէս կրցար դիտնալ թէ աղջիկը հինգ վեց տարեկան է, ոչ թէ մէկ տարեկան» : Վասն զի առանձին գաշտելու է» կ'ըսէ Պէյ : «Վասն զի ծռելով ջուրին մէջ նայելու չի վախնար» կ'ըսէ Մէյ : «Ըսէք ուրեմն, պատկերին մէջ ուրիշ բան կայ» կը հարցնեմ վերջապէս այս երկու տղայք : «Ուրիշ բան չկայ» կ'ըսէ Պէյ . «Հիմա ուրիշ պատ-

կեր մը զննենք» : «Ուրիշ բան չեմ տեսներ» կ'ըսէ նաև Մէյ : Անտան կը հարցնեմ . «Պզտիկ աղջիկն ինչ կ'ընէ» : Աղջիկները կը պատասխանեն, «Ջուրին մէջ կը նայի» : «Ետ աղէկ, բայց ջուրին մէջ ինչ բանի կը նայի» կը հարցնեմ նորէն, և երկուքը մէկէն կը պատասխանեն, «Այո, այո, պատկերին մէջ ուրիշ բան ալ կայ, երկու ձուկ կայ, և պզտիկ աղջիկն ասոնց կը նայի» :

Արդ, այս պատկերին մէջ եղած բաներն ինչ կերպով որ դիտեցին իմ երկու աղջիկներս, նոյնպէս դուք ուրիշ պատկերներու մէջ եղած բաները դիտելով, տեսք թէ այնպէս պիտի զուարճանա՞ք, ինչպէս կը զուարճանան իմ աղջիկներս :

«ԹՕՀԱՀ ՀԱԼԼԷՐ»

Մանգուձէի Էֆրեար մեղի համար կ'ըսէ թէ տղայոց Աւետարանի մէջ սուտ կը խօսինք, յաւիտի թուզն մէջ հրատարակուած «Անձրևի կաթիլներ» վերնադրով յօդուածին նման յօդուածներ հրատարակելով : Եթէ մեծապատիւ Մանգուձէի խմբագիրն այն յօդուածին գլուխը «Առակ մը» բառերը կարդացած ըլլար, մեզ ստախօս ամբաստանելու համար ի դուր քանի մը սիւն բան գրելու չէր յողներ :

Տղայոց ուղղուած խօսքերուն վրայ ալ Մանգուձէի քանի մը դիտողութիւնները կը ստիպեն զմեզ խմբագրին ուշադրութիւնը հրաւիրել Ղուկասու ժ. գլխաւոր Ձեռնորդ համարին :

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԿՄՐԱՅՈՂ ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

4. Իւրայելի ո՞ր թագաւորը բորոտեցաւ :
5. Ո՞ր տեսակ մարդիկ Աստուածաշունչին մէջ կարաւի նմանցուած են :
6. Իւրայելացոց համար ո՞ր ըսուած է թէ արագի չափ անգամ գիտուն չին :
7. Գեղեցիկ ձիւ մը նկարագրութիւնը Սուրբ զբոյց ո՞ր մասին մէջ կը գտնուի :
8. Սուրբ գրոց մէջ որո՞նք նմանցուած են զայլերու :

1—3 ՀԱՐՅՄԱՆՑ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ
 1. Բ Օր. Գ. 11 :—2. Յովնան :—3. Սաղմ. ՃԼԶ :

Ամերիկայի միտինարաց ընկերութեան կողմէն
 Խմբագիր Տ. Բ. ԿՐԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՆՆ
 2ազմագործար, Յակոբեան խան, Թիւ 12.